


Գիտություն



ՍԵՊՏԵՄԲԵՐ
№ 6 (183)
2005թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Հ. Օ. Տ.

Չ. Օ. Օ. Տ.

ՀԱՅԻՑ

ԿԵՐԻ

ԿՅՈՒՏԸ

Գևորգ ԷՄԻՆ

Մեր այբուբենը

Այբուբենն չէ սա՝
Բերդ է անմատույց,
Գանձ է աննվաճ.
Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:
էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար.
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ
Լինելու հնար:
Խարխուլը նավի,
Ծառը դպրության,
Կնիքն ինքնության,
Հացն հանապազօր
Հայի սեղան,
Ձիթեբերի հնձան:
Ղողանջը երգի,
Ղեկը ընթացքի,
Ճեմարան ճառի,
Մարդարան մտքի,
Մատյան հավատքի,
Յուզ՝ անմար ջահի:
Նախահիմքն է մեր,

Շողը մեր հույսի,
Ոգին մեր ճարտար.
Ձինարին այգու,
Պարիսպը մեր տան,
Ջրաղացն արդար...
Ռումբն է մեր ռազմի,
Ռունգը բնազդի,
Ռահվիրան փառքի,
Սերն ու սիրտն է մեր,
Սերմը միշտ ծլող,
Վեմ ու վիմագիր:
Տունը ցամաքում,
Տապանը ջրում,
Րոպեն սլացքում.
Ցորյանը արտում,
Ուղին անհայտում,
Փառքը սխրանքում:
Քիստն ու քաղն է մեր,
Քանքար ու քնար,
Քարավան ու ափ.
ԵՎ
Օջախն անմար,
Օժիտն անհատնում,
Ֆե-ից մինչև Այբ:

«Հայկական Այբուբենի համախարգը գլոխգործոց է: Հայկական հնչումը չայնագրվել է մի յուրահայտիկ նշանով, և այդ համախարգը այնքան լավ է հիմնվել, որ հայոց ազգին հայթայթեց հնչումի վերջնական մի արտահայտություն, որը մինչև հիմա իրեն պահեց առանց որևէ փոփոխություն կրելու, առանց բարեփոխության կարիք զգալու, որովհետև հենց սկզբից կապարյալ էր»:

Անտուան ՄեՅԵ

Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին

ԵՐԵՎԱՆ, 12-17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2005 Թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա

Մասնակցությամբ՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի



Մ. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Պարզ, հավատարմ ու ծնրադիր պետք է ողջունել իր դարադարձը, որովհետև բոլոր վերադիրները կենսաման իր մեծության առջև:

Մեսրոպ Մաշտոց կոչվեց նա, ծնված Տաթևական անդաստանում, Հացեկաց գյուղի ծոցում, եղավ սերմանող ու գորական, վարդապետ ու վերծանող, առաքյալ ու դաստիարակ, և շրջելով ավանից-ավան, քարայրից քարայր, լսեց վերջապես աստվածային իրականության պատգամը, և իր մոլորյալ ժողովրդին հավերժացրեց Հայ Գրերի հեղեղային լուսածագի մեջ: Այդ մեծագույն ժառանգը թողեց ամենքիս, և Օշականը նվիրագործեց իր գերեզմանը, որը վերևից կիսկի Լուսավորչի աստղը, և պատմությունը կշեփորի իր անունը իբրև հայ քաղաքակրթության երկնառաք ճարտարապետ: Իրենից կծնվի Բանին, Քնարին և Դպրության բոլոր համերգությունները, այն հրեղեն խոսքը, որ սերունդը կհնչե մշտանդուգ երկտասարդությունով, և մեզ կվերկի մտավոր ու հոգեկան անսուղորությունից:

Իր ստեղծած Տառերի խորհուրդով պիտի պսակենք իր նվիրականությունը, բանի որ ծաղկների յուրաքանչյուր դրասանգ կիկիսաբանչանա իր հաղթանակի առջև: Իր դամբարանի վրա երախտագիտությամբ պիտի դնենք այդ պսակը, ուր կան Անթառան և Բրաբլուն, Գինի և Դաշխուրան, Երախակալ և Չարդուզեն, Էոբյուն և Ըմբոստացուն, Թափ և Ժայթքուն, Իմաստություն և Լինելիություն, Խաչ ու Ծաղկատուն, Կալ և Հունձը, Չայն ու Նողանց, Ճռուտուն և Մեղեղի, Հույս և Նպատակ, Շնորհ և Ուխտ, Չարչարանք և Պայծառակերպություն, Ջահ և Ռազմ, Մեր ու Վաստակ, Տավիղ և Խրախանք, Փառք և Բանդակ:

Մեսրոպը կսլանա գաղափարական արժեքներից այն կողմ և կբարձրանա արարաչազորության սահմաններից, կվերածվի ամբողջովին լուսատու ու կենարար գոյության, նման արևի, հողի, պտղաբերության և վերածննդի օրերների:

Իրեն պաշտող հոգիները այդ ջերմությունով ապրեցին դարե դար, իր հանգանակը միշտ բարձր պահելու, տառապելու հրճվանքի և պատիվ ստեղծելու համար:

Եղ. ՍԻՍԵԼՇԵՆ

Ֆրանսիա



ՄԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, ակադեմիկոս

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ՀՈԴԵՎՈՐ ՄԻՐԱՆԷԸ

1600 տարի առաջ հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ մի կարևոր, պատմական շրջադարձ: 405 թվականին համարեղ գիտնական Մեսրոպ Մաշտոցը իր ժողովրդին տվեց ազգային գիրը, հայոց լեզվին տալով իր արժանի տեղը համամարդկային քաղաքակրթության անդաստանում:

Ինչպես դրանից մեկ դար առաջ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելով Հայաստանը նոր փուլ ազդարարեց քրիստոնեության կյանքում, այժմ էլ ազգային գրերի ստեղծումով բոլորովին նոր իրավիճակ ստեղծեց ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում: Ազգային կյանքն ընթացավ նոր, անմահադեպ, վերընթաց ճանապարհով, դեպի հոգևոր բարձունքները:

Մեսրոպ Մաշտոցը ազգային գրերի ստեղծումով դրեց հոգևոր նոր մշակույթի հիմքը, որի վրա բարձրացավ մեր ժողովրդի գրականության բոլոր բնագավառների, գիտության բոլոր ճյուղերի, մտավոր ողջ կյանքի շքեղ շենքը:

Հայկական գրերի ստեղծումն ազգային ինքնագիտակցության հասունության վկայականն էր: Այն հասունանում էր շատ բարդ քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգեբանական իրավիճակում: Դեռևս 4-րդ դարի կեսերից պարզ էր դառնում, որ ի դերն են ելնում Արշակունիների հայ պետականության կենտրոնացման ուղղությամբ թափած ճիգերը: Հայաստանը, հայտնվելով բարդ միջազգային իրավիճակում, ի վերջո 387 թվականին կանգնեց երկրի բաժանման տխուր փաստի առաջ: Երկրի բաժանումը չհաջեցրեց պարսիկների և հռոմեացիների ախորժակը: Ճնշումը շարունակվում էր երկուստեք Արևմուտքից բացարձակ քաղաքական-զավթողական, թեև դա հավատակից Արևելա-Հռոմեական կայսրությունն էր, իսկ Հարավ-Արևելքից անողոր քաղաքական-կրոնական միաձուլողական գիծ բռնած Սասանյան Պարսկաստանը: Երկրի ներսում հայոց եկեղեցին, որը ուժեղացող, հարստացող, իր ազդեցությունը մեծացնող գործոն էր դարձել, գտնվում էր վերելք ճանապարհին, աշխարհիկ իշխանության հողակարքի պայմաններում ձգտում էր գլխավորել տրոհված հայ հասարակության համախմբման գործը: Քաջ գիտակցելով ժամանակի պահանջը հայ հոգևոր դասի առաջադեմ ներկայացուցիչները, ժողովրդական լայն զանգվածների վրա իրենց ազդեցությունը ուժեղացնելու և նրանց վրա հենվելու նպատակով, քրիստոնեության բարոգի նոր ալիք են բարձրացնում: Այդ նպատակով անհրաժեշտ էր հրաժարվել եկեղեցու կողմից ընդունված, բայց ժողովրդի համար անհասկանալի հունարեն և ասորերեն լեզուներից, դրանով միաժամանակ դնելով իրավիճակում քաղաքական ազդեցություն անցկացնող, զանգվածաբար երկիր ներթափանցած հույն և ասորի հոգևորականության առջև: Ազդեցության ոլորտների բաժանման ընթացքում մերթ հալածվում, դուրս մղվում և մուլ-նիսկ այրման են ենթարկվում հունարեն գրքերը պարսկական կողմնորոշման հետևորդների կողմից, մերթ ասորերենը՝ հունական-բյուզանդական թեքում ունեցող խավերի կողմից: Այդ պայքարից բոլոր դեպքերում տուժում էր հայոց եկեղեցին և հայոց պետականությունը, որը գնալով ավելի ու ավելի կարիք էր զգում եկեղեցու աջակցության և պաշտպանության: Առաջ է գալիս հայ ազգային գիր ու գրականություն ունենալու սուր պահանջը:

Այդ լարված մթնոլորտում էին անցնում Մեսրոպ Մաշտոցի երիտասարդ տարիները, երբ նա որպես գինվորական, այնուհետև որպես քարտուղար, Վառձապուի թագավորի դպիր և թարգմանիչ, իսկ այնուհետև հոգևոր դասի մեջ մտնելով որպես բարոգի աշխատեց, մաքառեց և ճգնեց ստեղծված վիճակից ելք փնտրելու սկզբունք մտահոգությամբ: Եվ այդ ելքը գտնվեց:

Ունենալով Վառձապուի արքայի ջերմ օժանդակությունը, վեհափառ Տեր Սահակ կաթողիկոսի օգնությունն ու համակրանքը, քաջալերանքն ու հոգեպնդումը Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական նշանագրերը, որոնք զարգացման ամենալայն հեռանկարներ բացեցին հայոց լեզվի, դպրության, տեսական մտքի և առհասարակ մշակույթի առջև:

Այդ ժամանակաշրջանում տարբեր կրոնների և կրոնական հոսանքների միջև ընթացող գոտեմար-

տը տարբեր պետությունների և ժողովուրդների միջև գոյության պայքարի, մրցակցության և հակադրության դրսևորման և կազմակերպման միջոց էր դարձել: Գրերի ստեղծումով Մաշտոցը մեծապես նպաստեց հայոց եկեղեցու ազգայնացմանը, նրա որպես կազմակերպության և գաղափարախոսության կրողի ամրացմանը և մասնատված երկրի հոգևոր ու կրոնավարչական միասնության պահպանմանը թուլացող, իսկ այնուհետև վերացող պետականության պայմաններում:

Գրերի գյուտից անմիջապես հետո Հայաստանում ծավալվում է կրթական ու գրական եռանդուն աշխատանք: Մաշտոցը, Սահակ Պարթևը ու նրանց զինակիցները, Վառձապուի արքայի աջակցությամբ բացում են բազմաթիվ դպրոցներ, ծեռնանուխ լինում երիտասարդության կրթման գործին, միաժամանակ աշակերտներ ուղարկում Բյուզանդիա, Ասորիք և Ալեքսանդրիա՝ կրթվելու, լեզուներ սովորելու, թարգմանելու և այնտեղից կարևոր բնագրեր թարգմանելու համար: Հայաստան բերելու նպատակով: Նույն ժամանակ հնուտ լեզվաբան, հունարենի և ասորերենի գիտակ Սահակ Պարթևը կազմակերպում է թարգմանական աշխատանքը, մի շնորհակալ գործ, որն ավելի արագ կարող էր բավարարել հոգևոր կարիքները և դպրոց հանդիսանալ հայ հեղինակների համար, նրանց ինքնուրույն երկերի և՛ ձևի, և՛ բովանդակության հղկման տեսակետից:

Հայ թարգմանիչները, Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գլխավորությամբ և անմիջական մասնակցությամբ ծեռնանուխ են լինում Աստվածաշնչի թարգմանությանը: Դեռևս Սանուստուն Եղած ժամանակ 405 թ. Մաշտոցը թարգմանում է եղել Աստվածաշնչի մի մասը՝ Սողոմոնի առնկները, նորաստեղծ գրքեր փորձելու համար: «Ծանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», ահա առաջին նախադասությունը, որը խորհրդանշելով դարձավ այն մեծ գործի, որ ծավալեցին Մաշտոցը և նրա զինակիցները երկրով մեկ, արթնացնելով ազգը և մղելով այն հոգևոր սխրանքների, հայալեզու գրականության, գիտության, մտավոր կյանքի նոր, բովանդակային, արգասավոր գործունեության:

Սահակ Պարթևը 405-407 թթ. շտապ թարգմանում է Աստվածաշունչը, եկեղեցու ամենամահրաժեշտ կարիքները հոգալու համար: Շուրջ 30 տարի օգտվում են ասորերենից կատարված այդ թարգմանությունից, երբ 434 թ. Կոստանդնուպոլսից վերադառնում են այնտեղ ուղարկված Եզնիկ Կողբացին, Կորյունը, Հովսեփ Պաղանցին և Ղևոնդը՝ բերելով Աստվածաշնչի հունարեն «Յոթնասանից» թարգմանության ընտիր բնագիրը: Մաշտոցն ու Սահակ Պարթևը, Եզնիկ Կողբացու հետ միասին, համեմատելով ու ճշտելով առաջինը, փաստորեն կատարում են նոր թարգմանություն, որն իր կատարելությամբ մնում է հայոց գրականության մեջ որպես բացառիկ նմուշ: Համաշխարհային գրականության մեջ այն ըստ արժանվույն ճանաչված է որպես «թագուհի թարգմանութեանց»:

Նշելով գրերի գյուտի 1600-ամյակը, մենք նշում ենք միաժամանակ և Աստվածաշնչի թարգմանության 1600-ամյակը, նրա սկզբնավորումը: Կատարված լինելով ժամանակի ամենաառաջավոր, գիտուն և նրբաճաշակ հայ գործիչների կողմից, այդ թարգմանությունը օրինականացրեց և վավերացրեց ժողովրդական խոսակցական հայերենը, Այրարատյան բարբառը, որպես համահայկական պաշտոնական և գրական լեզու, դասեց այն «աստծո հետ խոսելու համար ստեղծված» լեզուների շարքը: Խոսակցական հայերենը դարձավ եկեղեցու պաշտոնական լեզու, դուրս մղելով հունարենն ու ասորերենը, և երբ 428 թ. երկարատև հոգևորքից հետո պարսիկների և բյուզանդացիների մահացու հարվածներից մարեց հայ Արշակունյաց թագավորությունը, եկեղեցին յուրօրինակ միավորող ուժ հանդիսացավ Հայաստանի պարսկական և բյուզանդական հատվածների համար, իսկ հայ գրական լեզուն սկսեց կատարել համընդհանուր պետական լեզվի դեր: Երկրի բոլոր նահանգներում ստեղծված վանքերն ու դպրոցները արագ տարածեցին մեսրոպյան գյուտը, հոգևոր կյանքի արթնացրին հայ հասարակության տարբեր խավե-



Մովսես ԽՈՐԵՆԱՅԻ

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(հատված)

Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեկնական ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանց, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետև ամբարտաճանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով, երևում էր բոլորին երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետև նա երեւտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պաշտոն էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով անմեղ, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հույսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձամբույր: Բայց որովհետև բոլոր բարեմասնություններն անկարող էմ թվել, խոսքս կդարձնեմ նրա մարմնի հուղարկավորությանը:

Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի աղոտ ձևով լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հողին ավանդեց. և շուտով շանհետացավ այս շողքը, բշերին տեսանելի չեղավ, այլ ամբողջ բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին: Այս ժամանակ հավաքված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելու (տեղի) պատճառով, որ դեռ մահից առաջ մեռելության վարժեցրել էր իրեն: Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն՝ իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգստարանում: Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնավորապես, որովհետև պարսիկներն այդ ժամանակ նրան էին վատախել մեր հայոց երկրի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դազաղի վրա գնում էր դեռ հանդիման ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աներևույթ եղավ:

ՍՈՒՋԻՆ հայագետը, որը ֆրանսերենով գրում է հինգերորդ դարի հայ գրերի մասին, Մաթյուսեն Վեյսիեռ Լա Կրոզն է: Վերջինիս վերաբերյալ նրա գրքի տիտղոսաբերքի վրա գրված է. «Ancien professeur en philosophie et bibliothécaire et antiquaire du roi de Prusse» («Հին փիլիսոփայության պրոֆեսոր, պրուսական բազմաթիվ գրադարանավար և հնագետ»): Լա Կրոզի գիրքը կոչվում է «Histoire du christianisme d'Ethiopie et d'Arménie» («Եթովպիայի ու Հայաստանի քրիստոնեության պատմություն»): Այս գրքի ողջ երկրորդ կեսը նվիրված է Հայաստանի քրիստոնեության պատմությանը՝ «Histoire du christianisme d'Arménie»:

Լա Կրոզի այս երկուն կարևոր փաստեր կան եվրոպական վաղ շրջանի հայագիտական ձեռքբերումների վերաբերյալ:

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած աշխույթների մասին գրել է ֆրանսիական գիտական հայագիտության հիմնադիրը Մեն-Մարտենը, որի «Պատմական և աշխարհագրական գեկույցներ Հայաստանի մասին» («Mémoires historique et géographique sur l'Arménie») ուսումնասիրությունն ազդարարեց հայագիտության մեծ սկիզբը Ֆրանսիայում:

Այս աշխատության մեջ Մեն-Մարտենը Մաշտոցի ու հայ գրերի գյուտի մասին խոսում է և՛ նախաբանում, և՛ բուն շարադրանքում, և՛ ծանոթագրություններում: Հենց սկզբի «Ազգ» հատվածում հայագետը շեշտում է, որ ներկա ուսումնասիրությունը Հայաստանին վերաբերող առաջին աշխատությունն է՝ լույս տեսած Եվրոպայում, և ինքը համոզված է, թե հանդգնել է տալ ճշմարիտ ծանոթություն Հայաստանի պատմության և աշխարհագրության վերաբերյալ: Նա պատմում է հայոց արքա Վառժապուտի գահակալության մասին, որը տևել է քսանհինգ տարի և ընթացել է խաղաղության մեջ: Ահա այդ բազմաթիվ օրոք Սահակ Պարթև կաթողիկոսի պատմելով գիտնական Մեսրոպը ստեղծում է հայոց աշխույթները և իրականացնում է Աստվածաշնչի թարգմանությունը՝ յոթանասուրհի բնագրից:

Հայ գրերի մասին կարևոր դիտարկումներ ունի ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուան: Բնականաբար առաջին հերթին նա կանգ է առնում Կորյուն վարդապետի անձնավորության վրա, մատենագիր, որի գիրքը գրաբարից թարգմանվել է ֆրանսերեն և անդրադառնում է այդ հեղինակի հաղորդածին Մաշտոցի անձնավորության, գրերի գյուտի հետ կապված կարևորագույն խնդիրների մասին: Վ. Լանգլուան հատուկ շեշտում է այն իրողությունը, թե Կորյունը հայ մշակույթի պատմության մեջ ստացել է Սքանչելի մականունը (l'Admirable) և պատկանում է թարգմանիչների առաջին խմբի երկրորդ դասին:

Մ.Մաշտոցի և նրա գործի մասին գրեթե նույն ժամանակահատվածում գրել են բելգիացի հայագետ Ֆելիքս Նեդ՝ ֆրանսերեն լեզվով և ֆրանսիացի հայագետներ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն ու Էդուարդ Դյուլորին:

Բելգիացի հայագետ Ֆելիքս Նեդ հայոց աշխույթների և Մեսրոպ Մաշտոցի մասին խոսել է իր կոթողային աշխատության մեջ, որը լույս է տեսել Լուվենում, 1886-ին: Այն կոչվում է «Բրիտանական Հայաստանը և նրա մատենագրությունը» («L'Arménie chrétienne et sa littérature»): Այդ գրքի մեջ Ֆելիքս Նեդ ունի առանձին բաժին, որը նվիրված է հայ մատենագրության ընդհանուր նկարագրին, լեզվին և աշխույթներին:

Մաշտոցը իր ժամանակաշրջանի համար դիտվել է որպես ամենագիտուն մի մարդ, որի հորինած աշխույթները հայերին ծառայել է մինչև մեր օրերը: Հայերի այդ նոր աշխույթները բաղկացած էր 36 տառերից, որոնց վրա ավելացան ևս երկուսը՝ 12-րդ դարից սկսած:

Մ.Բրոսսենի հայ առաջին թարգմանիչներին տված գնահատականները լիովին համընկնում են Ֆ.Նեի

հետևյալ եզրակացությանը. «Հայկական Աստվածաշնչի տարբերակը... մի մեծարժեք գործ է, որը և՛ հնույթյամբ, և՛ իր խորությամբ պատիվ է բերում թարգմանության հեղինակներին»:

1883-ին Փարիզում լույս է տեսնում Էդուարդ Դյուլորիի թարգմանած Մտեփանոս Ասողիկ Տարոնեցու «Տիեզերական պատմությունը», որն ունի շատ հարուստ ծանոթագրություններ: Էդ.Դյուլորին Մտ.Ասողիկի պատմածը Մաշտոցի և գրերի գյուտի, ինչպես նաև Վառժապուտի ու Սահակ Պարթևի այդ գործում ունեցած որոշիչ դերի մասին ներկայացնում է մի շարք ծանոթագրություններում:

Էդ.Դյուլորին էլ իր ընթերցողներին հղում է Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը, որը Վենետիկի երկու հրատարակություններից ֆրանսերեն է թարգմանել Սկրուիչ Էմիլը և հրատարակել է Վիկտոր Լանգլուան իր «Collection»-ի երկրորդ հատորում:

Էդ.Դյուլորին նշում է, որ Մաշտոցի ստեղծած երեք աշխույթներից՝ հայկական, վրացական, աղվանական, վերջին երրորդը կորած է և գիտնականներին ծանոթ չէ: Ճանապարհորդ Պ.Բորեն վկայում է, թե աղվանական գրերը նման են հայկականին, միայն թե հիշեցնում են հայերենի նոտագիտությանը:

Այսպիսով, 19-րդ դարի նշանավորագույն ֆրանսիացի հայագետները՝ Մեն-Մարտենը, Վ.Լանգլուան, Մ.Բրոսսեն, Էդ.Դյուլորին, Մեսրոպ Մաշտոցի աշխույթների վերաբերյալ կրկնում են 5-րդ դարի հայ մատենագիրներ Կորյունի, Մ.Խորենացու և Վազար Փարպեցու հիացական խոսքերն ու նրանց հաղորդած փաստերը՝ անվերապահորեն հավատ ընծայելով դրանց:

Մաշտոցյան գրերի մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է թողել Անտուան Մեյեն, որին ժամանակակիցներն անվանում էին համեմատելի լեզվաբան: Նա հայոց լեզվի մասին գրել է թարգմանիչ աշխատություններ և բնականաբար խոսել է նաև մաշտոցյան աշխույթների և նրանով ստեղծված մատենագրության մասին: Չնայած մինչև Ա.Մեյեն Եվրոպայում շատերն են գրել Աստվածաշնչի թարգմանության մասին, սակայն հայագետը համոզված է, որ դեռ չի գրվել այդ մասին ճշմարիտ բնական հրապարակում: «il n'existe pas d'addition véritablement critique de la Bible arménienne»: Նույն տեղում Ա.Մեյեն նկատում է, թե հենց Աստվածաշնչի թարգմանության հայերենը օրինակ է ողջ հայ հին գրականության համար:

Անտուան Մեյեն «Հայերեն լեզուն» («La langue arménienne») հոդվածում գրում է. «Գոյություն ունի ազգ, երբ մարդկանց մի ամբողջություն այն զգացումը և կամքն ունի, որ ինքը կազմում է իր ավանդությունները, իր սովորությունները և ապագայի իր ձգտումներն ունեցող մի առանձին խումբ: Ոչինչ ավելի հստակորեն չի նշում ազգի գոյությունը, որքան սեփական լեզուն ունենալը»:

Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել և ավելի խնամքով չի մշակել իր սեփական լեզուն»:

Մեկ այլ առիթով Ա.Մեյեն խոսում է մաշտոցյան շրջանի հայերենի մասին, որը վկայում են սրբազան գրքերի թարգմանության բնագրերը, որոնց սկզբնավորման ավանդական թվականը Բ.հ. 5-րդ դարն է, այսինքն մաշտոցյան աշխույթներից սկսված հայ գրականությունը: Ա.Մեյեն շատ է ափսոսում, որ ձեռագիր մատյաններում ստեղծված հայ հին գրականությունից ոչինչ չի հասել մինչև 9-րդ դարը:

Ա.Մեյեն ևս հիացած է մաշտոցյան աշխույթների կատարելությամբ. «Հայերեն աշխույթներն իր արժեք տվող հենց այն է, որ այդ ստեղծագործության հեղինակը չի կաշկանդվել նախապես գոյություն ունեցող սովորություններով և տվել է իր լեզվի հնչյունական համակարգի հարազատ պատկերը»:

Ա.Մեյեն և Ֆ.Մակլերի հայագիտական բեղուն գործունեությունը շարունակեց Ֆրեդերիկ Ֆեյդին:

Ֆրեդերիկ Ֆեյդին 20-րդ դարի ֆրանսիացի նշանավոր հայագետ է, որը թողել է հարուստ գիտական ժառանգություն: Նա երկար տարիներ զբաղվել է հայագիտությամբ, եղել է Սորբոնի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչը, բազմիցս այցելել է Խորհրդային Հայաստան:

Լայն էին Ֆ.Ֆեյդիի գիտահետազոտական հետաքրքրությունները հայագիտության բնագավառում՝ հայ պատմիչներ, «Մատենի Դավիթ» էպոս, հայոց լեզվի պատմություն, հայկական բարբառներ, հայ եկեղեցու պատմություն, կրոնական հմայիլների բնագրեր և նրանց մեկնություններ, ոսկեդարյան հայ գրականության և գրի խնդիրներ, ժամանակակից հայ գրողներ և այլն:

Ֆրեդերիկ Ֆեյդին հմտացել է թե գրաբարի, թե հայ բարբառների, թե ժամանակակից արևմտահայ լեզվի մեջ:

Նրա պատրաստած հայոց լեզվի դասագիրքը, որը երկու անգամ է հրատարակվել, գրված է արևմտահայերենի ուսուցման համար. «Manuel de langue arménienne (Armenien occidentale moderne)», Paris, 1969:

Մաշտոցի և նրա աշխույթների մասին հիշատակում կա նաև Ժ.դը Մորգանի «Essai sur les nationalités» («Ուրվագիծ ազգությունների մասին») գրքում: Ժ.Մորգանը հատուկ գալույթով է խոսում մահմեդականների վայրագությունների մասին և ասում է, թե Հայաստանի փրկված հոգևոր զանգեղ և պատմական փաստաթղթերը պահվում են Սուրբ Էջմիածնի մայրական ծոցում: Նա նշում է հայ ժողովրդի ուսումնաստեղությունը. «Հայ գյուղերում հոգևորականները երեխաներին սովորեցնում են հայոց լեզուն: Այս դպրոցներում, որոնք չի են կայտառ տղաներով ու աղջիկներով... սովորեցնում են կարգավ և անկարկելով, ինչպես սովորեցրել է սուրբ Մեսրոպը մեր թվարկության առաջին դարերում»:




ՄԵՍՐՈՂ ՄԸՇՏՈՑԻ...

➤ 2 ըր և, ներգրավելով նրանց ամենակարող ուժերը հոգևորականության շարքերը, հիմք դրեցին մի հզոր հոգևոր շարժման, որը ճեղքեց եկեղեցական նեղ պաշտամունքային շահերի շրջանակը և դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի արտահայտիչը:

Աստվածաշնչի թարգմանությունը, հայ մատենագրության հիմքը դնելուց բացի, հանդիսացավ մի նոր կրթության դարոց, որի հնոցով պարտավոր էր անցնել ամեն մի գրագետ, ամեն մի գործիչ և գիտնական: Եթե հաշվի առնենք ֆեոդալական հասարակարգում եկեղեցու ունեցած դերն ու հեղինակությունը, ինչպես և այն կարևորագույն հանգամանքը, որ եկեղեցու ձեռքում էր գտնվում ողջ կրթական գործը, ապա հասկանալի կդառնա Աստվածաշնչի դերը միջնադարյան դպրության ու գիտության զարգացման գործում: Իր բովանդակությամբ, իր հանրագիտարանային բնույթով Աստվածաշունչը շոշափում էր հասարակական գիտակցության գրեթե բոլոր ձևերը՝ բարոյագիտությունը, փիլիսոփայությունը, իրավունքը, հասարակական-քաղաքական միտքը, պատմագրությունը, գեղարվեստական գրականությունը և այլն: Հին և Նոր կտակարանների կատարյալ թարգմանությունները տվեցին այդ բազմաբովանդակ գրական տեսակների հայալեզու տերմինները և ճկուն արտահայտչաձևերը, որոնք հնարավոր դարձրին և ինքնուրույն, և թարգմանական գրականության հետագա արագընթաց զարգացումը:

Աստվածաշնչից հետո թարգմանիչները ձեռնամուխ են լինում բազմապիսի եկեղեցական գրքերի թարգմանությանը: Ավագ թարգմանիչների կողմից, դեռևս Մաշտոցի և Սահակ Պարթևի կենդանության օրոք և նրանց հսկողությամբ թարգմանվում են Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը», այնուհետև «Պատարագամատուցը», աստվածաբանական տարբեր մեկնություններ, ճառեր, կանոններ, վարքագրական բնագրեր հունարենից և ասորերենից:



Առաջին հերթին լրացնելով քրիստոնեական գրականության պահանջը, հայ թարգմանիչները դիմում են այն ժամանակվա գիտության տարբեր ճյուղերին և հարստացնում հայոց գրականությունը գիտական և գրական մեծարժեք թարգմանություններով: Դրանք մեծապես հարստացրել են հին հայկական մշակույթը, իսկ որոշ գործեր էլ միայն հայերեն թարգմանությունների շնորհիվ փրկվել են կորստից և հայերենի միջոցով մտել համաշխարհային գրականության մեջ:

Միաժամանակ ծնունդ է առնում հայ ինքնուրույն գրականությունը իր բազմատեսակ ժանրերով պատմագրությունը, վարքագրությունը, ճառագրությունը, մեկնողական երկերը, փիլիսոփայությունը: Հենց այդ ժամանակ ձեռնարկվում է հայոց եկեղեցու, քրիստոնեության ընդուն-

ման պատմությունը ստեղծելու առաջին փորձը, որը կատարում է Ազաթանգեղոսի անվան տակ ծափված հայ մեծ մտավորականը: Դեռևս ակադ. Ն. Մառը հայտնել է այն միտքը, որ Ազաթանգեղոսի «Պատմություն» հեղինակը, ամենայն հավանականությամբ, ինքը, Մաշտոցն է: Մենք բաժանում ենք այդ կարծիքը և գտնում, որ եթե ոչ ամբողջությամբ, ապա առնվազն այդ գրքի գրեթե կեսը «Սուրբ Գրիգորի վարդապետությունը», հայ աստվածաբանական և փիլիսոփայական մտքի առաջին և կարևորագույն հուշարձանը, իրոք պատկանում է Մեսրոպ Մաշտոցին, ինչպես և նրա հետ սերտ կապի մեջ գտնվող «Հաճախապատում ճառերը»: Դրա մասին ուղղակի ցուցումներ կան նրա աշակերտ Կորյունի մոտ, որն իր ուսուցչի կենսագրությունը և հայոց գրերի ստեղծման պատմությունը շարադրելիս շատ հստակ նշում է Մաշտոցի նաև գրական վաստակը «գիտ մշանագրաց»-ից բացի «լուսավոր վարդապետությունը» և «յաճախապատում ճառերը», որոնք անմիջականորեն կապված են Մաշտոցի քարոզչական գործունեության հետ, հեթանոսության մնացուկների դեմ մղած անհաշտ պայքարի և քրիստոնեական ուսմունքի լայն տարածման, հայոց եկեղեցու դիրքերի ամրապնդմանը ուղղված հետևողական աշխատանքի հետ:

Մաշտոցի և Սահակ Պարթևի օրինակին են հետևում նաև նրանց զինակիցները, ավագ և կրտսեր աշակերտները Կորյունը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Հովհան Մանգակունին, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին և շատ ուրիշներ, ամեն մեկը իր ավանդը բերելով հայ պատմագրության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, աստվածաբանության բնագավառներում:

Տիտանական աշխատանքի շնորհիվ գրերի գյուտից հետո մի քանի տասնամյակների ընթացքում ստեղծվեց մի հարուստ գրականություն, բազմաբովանդակ հոգևոր մշակույթ, որը հիմք հանդիսացավ հետագա դարերի նվիրյալների համար, որոնք և շարունակեցին մաշտոցյան ավանդույթները, պահպանեցին մեր լեզուն, ազգային ինքնությունը, ճոխացրին մեր մշակույթը և նվաճեցին արժանի պատվավոր տեղը համամարդկային մշակույթի պատմության մեջ:

ԿԻՄ ԲԱՎՇԻ

Մեղանին վառվում էր մումը...



Ամեն մի ժողովուրդ ունի իր Կրեմլը, իր Լուվրը, իր Բուրգերի հովիտը: Հայաստանում դա Մատենադարանն է: Այնտեղ մտնում ես՝ ինչպես համերգարահ:

Սկզբում նվագախումբը լարում է գործիքները, բազմաձայն աղմկում է երևանը: Վեր ես բարձրանում վարդապետ շենքերով պարսպապատված փողոցով դեպի բարձունքը. հնչյունները մեկը մյուսի ետևից լուռ են: Մնում են ճնճողների խաղաղ ճնճողությունը և մեկ էլ՝ մանուկների զիլ կանչերը հարթ ու անվերջանալի աստիճաններից:

Մա հնչում է որպես երաժշտական առաջին քննա: Եվ դրա հետ, դրան գուգահեռ, յուրաքանչյուր քայլի հետ դեպի վեր ծնվում է, ուժգնանում Մատենադարանի հանդիսավոր մեղեդին:

Մատենադարանը վեհաքանչ մոտենում է, աճում որպես ամրոց, որպես հուշարձան: Լեռան պատտարին նրա ճակատը մնացել է հին ձեռագրի սկզբնաձև խորանի, մեկը՝ այնտեղ պահվող հազարավոր խորաններից:

Մատենադարանը հին հայերենում նշանակել է մատյանների պահոց, գրադարան, գրապահոց:

Այստեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատարիկ կա, փոքրիկ տասնիներ գրամանոցից, մինչև ամենամեծը՝ երկփայտեց մագաղաթյա հսկան: Ամենահին բերրիկները պահպանվել են V դարից, հնագույն մանրանկարներն ստեղծվել են VI դարում՝ Ռուսիայի մկրտությունից առաջ, Անգլիան նորմանների նվաճելուց առաջ:

Մատենադարանի պատմագրական աշխատությունները պատմություններ են

պահպանում անհետացած ժողովուրդների և պետությունների, նրանց մշակույթի, ավանդույթների, երգերի մասին... Հին ձեռագրերում խառնվում է բազարի աղվանների մասին, ժողովուրդ, որն ապրել է ներկա Արթուրյանի հյուսիսում: Միայն Մատենադարանում է գտնվում աղվանների այբուբենը, որ հայտնաբերված է ձեռագրերից մեկում:

Մատենադարանում պահպանվում են հին աշխարհի մտածողների շատ երկեր, որոնց բնագրերը կորսված են, և դրանք այսօր սկզբնաղբյուրի իրավունք են ձեռք բերել: Եվկլիդեսի երկրաչափությունը հայերեն ավելի վաղ է թարգմանվել, քան լատիներեն, և այն էլ ոչ թե արաբերենից, այլ հունարեն բնագրից:

Մատենադարանի ձեռագրերում կան փիլիսոփայության և իրավունքի, մաթեմատիկայի և աշխարհագրության վերաբերյալ մատյաններ: Գիտական երկերը պարունակում են ապագա հայտնագործությունների հունդեր: Բանաստեղծությունները և միջնադարյան գրույցներն ապշեցնում են բարոյությամբ և Վերածննդի կենսասիրությամբ: Հին հայկական մանրանկարները փայլում են ոսկով, որդան կարմրով, լազվարդով. դրանք նման են բանկարծեք ջնարակի:

Բժշկարաններում կան դեղատոմսեր, որ հետաքրքրական են նաև ժամանակակից դեղագործների համար, քիմիայի վերաբերյալ աշխատություններում խորհուրդներ, թե ինչպես ոսկի հալել, ինչպես ներկեր պատրաստել, այն զարմանահրաշ ներկերը, որոնք ժամանակի ընթացքում ոչ միայն չեն խամրում, այլև, քվում է, ավելի մաքուր և պայծառ են դառնում:

Թանաքի հանելուկային որակի մասին է հավաստում քարացած մի մատյան, որ հայտնաբերված է քարանձավում: Կրաքերը դարերով վիացել են ձեռագիրը, բայց չեն կարողացել ջնջել թանաքը. տառերն ասես փորագրված են քարի վրա:

Հինգերորդ դարի շեմին մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը՝ 36 գիր: Մեսրոպ Մաշտոցի և նրա զինակիցների ջանքերով հիմնադրվող հայկական դպրոցներից գուգահեռ ստեղծվում էին գրապահոցներ՝ մատենադարաններ, աշակերտները սերմերի նման սփռվում էին ամբողջ երկրով, գրառվում էր Հայաստանի նրա թագավորների և գիտնականների, նրանց մղած պատերազմների ու մեծության, ծանր ժամանակներում նրանց

ցուցաբերած արիության և անկոնությունը պատմությունը՝ և այս ամենի մեջ կար ինչ-որ փոքրիկություն, վերահաս իրադարձությունների կոսիում, մատյաններում ժողովրդի հիշողությունը, ազգությունը և լեզուն առարկայացնելու ձգտում:

Դա հիշեցնում էր գարունը անապատում, երբ մի քանի օրում շուրջն ամեն ինչ կանաչում է, ծածկվում վառ ծաղիկներով: Բնությունը շտապում է անցնել ծաղկից պտուղ դառնալու ուղին: Ծաղկոցին փոխարինելու է գալիս ամուսն տոբը, չար խորշակները մոխրացնում են հանկարծական ստեղծված կանաչ գորգը, միայն փոքրիկ թափված սերմերն են պահպանվում մինչև հաջորդ բարենպաստ պահը, որպեսզի նորից ծաղկում ապրեն:

Հայերի ու հայ ձեռագրերի պատմությունը որքան նման է բնության այս բնական շրջապտույտին: Այն տարբերությամբ միայն, որ ամուսն երաշխիս և ձմռան սառնամանիքներին բնության մեջ պարտադրաբար փոխարինելու է գալիս գարնանային ծաղկոցը, իսկ Հայաստանում ծաղկափթույնը տրորվում էր բազում դարեր:

Երբ գալիս էին բշտամիները, գրիչը ձեռագրեր ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, քանաքը, ներկերը և ընդօրինակման մատյանը գնում էր ժողովրդի ետևից: Եվ որտեղ էլ որ նա դադար առներ, շարունակում էր ընդօրինակման իր աշխատանքը:

Բազմաթիվ մատյանների թերթեր այրվել են հրդեհներից, ցողվել արյունով, իսկ հիշատակարանները պատմում են պատերազմների, ոսոխի գիշերային հարձակումների, քուլտուրների խարույկների, գաղթի ճամփաների, մարդկանց կորստյան, գրիչների աշխատանքի մասին, ուլբեր հիսուն, վաթսուն տարի անընդմեջ «գոր ու գիշեր» ձեռագրեր են արտագրել և հարազատ աղջիկների նման քաղցրել բշտամուց:

Այսպես է ծնվել հայկական ձեռագիր մատյանը. բացառիկ մի երևույթ համաշխարհային մշակույթով, ոչ միայն իր հնության և հարուստ բովանդակությամբ առումով, այլև այն տեղով, որ զբաղեցրել է ժողովրդի կյանքում, այն դերով, որ խաղացել է նրա պատմության մեջ:

Ծագման պահից իսկ մատյանը եղել է ոչ թե պարզապես տեղեկությունների մի հանրագումար՝ գրված մագաղաթի թերթերի վրա, ոչ միայն գրագիտության, մշակույթի տարածման միջոց, այլ եղել է սուր, որով



ժողովուրդը պայքարել է հանուն իր ազատության և ազգապահպանության:

Մատենադարանում պահվում է V դարի պատմիչ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանի տասնութ ձեռագիր: Հեղինակը Ավարայրի ճակատամարտի հոգեցունց վկան է:

Եղիշեի մատյանը հազար հինգ հարյուր տարի ժողովրդին արթուն է պահել, պայքարի է կոչել: Այժմ էլ է ոգևորում. Մատենադարանի մուգ շագանակագույն մարմարապատ գավթում հանդիսավոր ոսկով առկայում է Հովհաննես Խաչատրյանի «Ավարայրի ճակատամարտը» տազնապալից, ողբերգական խճանկարը:

Հանդիպումներ գիտնականների և եկալիչների հետ, այցելություն հին վանքերին, մտորումներ հին ձեռագրերի և մանրանկարների շուրջ: Հնորյա մատյանների գաղտնիքներ, նրանց խճճված, երբեմն էլ արկածային պատմություն: Գիտական որոնումների լաբորատորիա՝ տարակույսներ, ենթադրություններ, վարկածներ: Փաստերի ամուր հիմք: Եվ այս ամենի կողքին այն, ինչը կարելի է պատկերացնել, ենթադրել. «մոռվի ստեղծել»: Այս ամենը ի սեր մի բանի, պատմել, թե ինչպես մատյանների ճակատագրերը միահյուսվել են ժողովրդի ճակատագրին:

Վերջին կես դարում Մատենադարանի «բնակչությունը» ավելացել է երկուսուկես անգամ: Դա համապատասխանում է Հայաստանի բնակչության աճին:

Մատյանները, ինչպես մարդիկ, ուր էլ որ թափառեն, երկար ճամփաներից հետո բակում են հայրենի տան դուռը:



Քաղկեդոն: Մերոնը չէին մասնակցում քաղկեդոնյան ճակատամարտին, որովհետև ճակատամարտում էին Ավարայրում: Մերոնը Ավարայրում չհաղթեցին, բայց նաև չպարտվեցին, որ արդեն հաղթանակ էր և մեծ հաղթանակ: Պարսկաստանը ստիպված եղավ Հայաստանից ետ կանչել իր Չրադաշտին, և հաջորդեց քրիստոնյա:

Մերոնը չէին կարող խուսափել Քաղկեդոնի ճակատամարտից, որտեղ նույնպես պիտի չհաղթեին, բայց նաև պիտի չպարտվեին, որ արդեն հաղթանակ էր և մեծ հաղթանակ: Հոռոմ պիտի ետ տաներ իր ծուռ խաչը, և հայաստանցին պիտի իրեն կոչեր հայ քրիստոնյա... Այսօր իհարկե, այս բառակապակցությունը զուտ կրոնական է. այն ժամանակ «հայ քրիստոնյա» կոչվելով՝ մերոնը կարողացան համընդհանուրի մեջ մասնավորվել, համամասնության մեջ տարբերակվել. այդ համընդհանրությամբ ու համամասնությամբ կանխեցին գրադաշտական (ապա՝ նաև իսլամական) սպառնալիքը, իսկ այդ մասնավորմամբ ու տարբերակմամբ դիմադրեցին հույն-բյուզանդական համահարթիչ վտանգին:

Մի պահ կարող է թվալ, թե այս ամենը չի

Մի համընդհանուր-աստվածային օրենք էր թելադրում նոր կրոնը: Բայց փաստորեն այդ օրենքը դառնում էր բյուզանդական օրենքի պարտադիր թելադրանք:

Արևմտյան Հայաստանը վերջնականապես միացվեց Բյուզանդիային, Հայաստանի միջնահատումը դարձավ անջնջելի փաստ, որ պիտի հարատևեր: Հայկական պետականությունը ստացավ ոչ թե հերթական վնասվածք, այլ ողնաշարի անբուժելի ջարդվածք, որ շուտով պիտի հասցներ մահվան:

Փոքրիշատե խորամիտ քաղաքագետը չէր կարող չհասկանալ, որ Արևելյան Հայաստանին էլ սպառնում է Արևմտյանի վտանգը՝ կատարյալ գաղութացումը: Արևելյան Հայաստանը փաստորեն արդեն անկախ թագավորություն չէր, այլ պարսկական մի կիսագաղութ: Պետք էր մի բան անել: Բայց ի՞նչ: Եվ ինչպե՞ս:

Եվ այդ բախտորոշիչ պահին էր, երբ ծնվեց մեկը, ում մասին մեր պատմիչները իրենց խոսքն սկսում են զարմանալի մի պարզությամբ. «Եւ այդ մի՛ Մաշտոց անուն...»:

Տարոնի Հացեկում ծնված այս մարդը չէկավ մեկով էլ ավելացնելու հարցնողների անպակաս բանակը: Նա եկավ, որ պատասխան

ված էր մեր դարավոր բնիկ հողը:

Մեզինք արդեն խել էին մեր պետականությունը, որի վերականգնումը անհնարին էր և անկարելի պիտի մնար դեռ երկար դարեր:

Մաշտոցն էր, որ փլատակված մեր հավատի տեղ հաստատեց նոր հավատ, հավատ, որ մեզ համար հագուստ չդարձավ, այլ մեջքապնդող գոտի: Հրոմացիիլ արված մեր հին մշակույթի տեղ նա սկզբնավորեց մի նոր մշակույթ, որ պիտի գլուխգործոցներ տար համաշխարհային բաղաբալրությունը:

Այդ նա էր, նորից և դարձյալ նա, որ մեր լեզուն հանեց այն աննախանձելի վիճակից, ինչ ունենում է աղքատ ազգականը իր մեծատուն բարեկամների տանը: Արդեն միայն Աստվածաշնչի բարգմանությամբ հայոց լեզուն կատարեց իր փառատոնը՝ ապացուցելով, որ ի գործու է լիապես արտահայտելու ինչպես պատմություն, այնպես էլ օրենսդրություն, ինչպես հրապարակախոսություն, այնպես էլ բանաստեղծություն, ինչպես բուսական ու կենդանական աշխարհ, այնպես էլ երևակայություն-տեսիլք և կանխատեսություն-մարգարեություն, որովհետև հին եբրայեցոց «Մուրբ գիրքը» իսկապես մի Ամենամատյան էր գիտության և արվեստի բազում բնագավառներին:

Միայն Աստվածաշնչի բարգմանությամբ, որ հետո օտարներից պիտի կոչվի «մայր բարգմանություն» կամ «բագուտի բարգմանություն», հայոց լեզուն հնդեվրոպական ընտանիքի այդ զավակը, աղքատ ազգականի իր անմխիթար վիճակից պիտի միանգամայն հասներ գահերեցության, իր այն օրինական բարձին, որն այլևս չպիտի կարողանային խել նրա արիական գոռոզ ազգակիցները, և բազմաձև իր այդ օրինական բարձին աշխարհի բազմաթիվ

Պարույր ՍԵՎԱԿ

ԹՐԻ ԴԵՄ ԳՐԻՉ

Ճիշտ է, որ Մաշտոցից դարեր առաջ էլ հայերը կային: Ճիշտ է, որ նրանք ունեին պետականություն և բանավթնառ, գիտեին կորոզներ կառուցել ու կերտել բազմոցներ, բանում էին գինի և ձուլում արծառներ, բառերն էին հաճախում ու վալելում գեղեցիկ հաճույքն այն պարույր-կարավողների, որոնք «երգեին ձեռամբ»:

Երևակայությունն ու պատկերացումը նման լինելով նույնը չեն:

Մաշտոցը եկավ դառնալու մեր պատկերացումը, պատկերացումը մեր իսկ գոյության, մեր իսկության:

Այն, ինչ մարդու կյանքում չափվում է տարով, ժողովուրդների կյանքում չափվում է դարով: Նախամաշտոցյան մեր կյանքը անցավ առանց «ինքնահիշողության»: Եվ Մաշտոցն էր, որ եկավ դառնալու մեր հիշողությունը, հիշողությունը մեր իսկ գոյության, մեր իսկ մասին:

Եվ սա չափազանցություն չէ, այլ պարզ եզրահանգումը 16-դարյա մեր կյանքի, հետևությունը մեր ընդարձակ պատմության Մաշտոցից մինչև այսօր:

Հիրավի, ո՞վ էր Մաշտոցը:

Այսօր, 16-դարյա մի բարձունքից նայելով, Մաշտոցը մեզ երևում է նախ և առաջ իբրև մի վիթխարի քաղաքագետ, որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը:

Մաշտոցը, այո՛, հայ նշանագրերի գյուտարար էր հայ դարության հիմնադիրը լինելուց առաջ, մեր մեծագույն քաղաքագետն է:

...Ինչպես հնագույն, այնպես էլ նորագույն ժամանակներում աշխարհակալները իրենց հարևաններին ձուլում են ոչ միայն մեծությամբ ու զորությամբ, այլ նաև այն համընդհանուր-ընդհանրացնող գաղափարով, որ տարածում են այդ աշխարհակալությունները:

Եթե հույն-հռոմեական ու հին հայկական պանթեոնի տարբերությունը միայն անունների մեջ էր, ապա հայ-իրանական պանթեոնում այդ տարբերությունն էլ համարյա չկար: Եվ, անտարակույս, խելացի էր Տրդատ Գ-ն, որ այդ համընդհանուր-ընդհանրացնող հեթանոսությանը կուլ չգնալու համար իրեն պատեց փշերով՝ Հիսուսի փշեպատվով: Եվ պակաս խելոք ու հեռատես չէին նրա քրիստոնյա հաջորդները, որոնք երկու դար հետո տեսան ու հասկացան, որ համընդհանուր-ընդհանրացնող քրիստոնեությունը դարձել է նույնպիսի ասիական վտանգ, ինչպիսին մի ժամանակ հեթանոսությունը էր:

Կան պահեր, երբ մի «չէ՛» կամ «այո՛» ասելը հավասարվում է կյանքի կամ մահվան՝ վերանայով նույնիսկ հերոսությունից: Այն ժամանակվա մեր «այո՛»-ն կամ «ոչ»-ը բախտորոշ նշանակություն ուներ: Եվ մեր նախնիք ասացին «ոչ»: Եվ այսօր ոչինչ չառող «Քաղկեդոնի ժողով» և «միաբնակ» բառերը դարձան մեր հին պատմության գլխագրերից մեկը...

առնչվում Մաշտոցին, մանավանդ որ և՛ Ավարայրի ճակատամարտը, և՛ Քաղկեդոնի ժողովը տեղի ունեցան նրա մահից մեկ տասնամյակ հետո: Բայց ըստ էության Մաշտոցը ոչ միայն առնչվում է Ավարայրին ու Քաղկեդոնին, ոչ միայն մասնակցին է այդ արյունոտ և անարյուն ճակատամարտերի, այլև փաստական կազմակերպիչն է և՛ մեկի, և՛ մյուսի:

Զոռաճանք, որ Վարդան Մամիկոնյանը՝ Մահակ Պարթևի թոռը, Մաշտոցի առաջին աշակերտներից մեկն էր, մեկը այն սակավաթիվներից, որոնք առաջինը վարժվեցին մաշտոցյան տառերի գրությանը և հեզեցին «այլ-բեն-գիմ...»: Եթե Վարդանը չլիներ սպարապետական տնից նա, անկասկած, պիտի դառնար մեկը այն դպիր-թերթողներից, որոնք «առաջին բարգմանիչը» են կոչվում, ինչպես որ դարձան նրա անմիջական դասընկերները՝ Հովսեփ Վայցոճորեցին, Վոնդ Երեցը, Եզնիկը, Կորյունը և մյուսները: Մաշտոցի անմիջական աշակերտներից էին նաև Վարդանանցի շատերը: Սա թե ինչու Վարդանանց շարժման բուն հեղինակները մաշտոցյան էին, Մաշտոցի ավագ ու կրուսեր աշակերտները: Եվ, բացի դրանից, պարսից ռազմի փղերին ու Մատյան գնդին հաղթելուց առաջ կամ ետ մղելուց առաջ, և այդ անելու համար նախ և առաջ հարկավոր էր հաղթել կամ ետ մղել պարսից «թշ-աղանդը»: Ուստի և նախքան Տոմոստ հասնելը ճակատամարտը պիտի մղվեր «Եղծ աղանդոց»-ի մեջ, «Եղծ», որի հեղինակը նախ Մաշտոցն էր, ապա միայն՝ նրա աշակերտը՝ Եզնիկը...

Այլ խոսքով ասած՝ գրադաշտական նվաճմանը դիմադրելու համար պետք էր գրադաշտական չլինել:

Արդեն հարյուր տարի էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանում համարվում էր պաշտոնական կրոն: Քանզիլ էր ավերվել էին մեծի-յաններն ու բազմոցները, որոնց տեղ բարձրացել ու բարձրանում էին եկեղեցիներ՝ հաճախ դեռևս անձեղի ու փայտակալուր: Բայց այդ եկեղեցիների գմբեթին տնկված խաչը երկնքի մեջ խրվելուց առաջ մխրճվում էր նաև մարդկանց սրտերի մեջ: Հայկառակ հեզություն և համբերատարության իր ուսմունքի՝ քրիստոնեությունը տարածվում էր անբող բռնությամբ, խոսելով կամավորությունից՝ գործում էին հարկադրանքով, կրկնելով՝ «մի՛ սպանիր»՝ հեղում էր արյուն կամ մատնում՝ արտաբանման:

Քրիստոնեությունը, որ տարածվում էր իբրև մի համամարդկային-ապագային ուսմունք, առաջին իսկ հաջողություններից հետո անմիջապես ցույց տվեց ինչպես իր դասակարգային, այնպես էլ ազգային էությունը: Տարածվելով ամենից առաջ հռոմեական կայսրության մեջ և այդ կայսրությունից՝ նա դարձավ մի նոր և գորավոր գործիք՝ բյուզանդական ազդեցության ծավալման ու խորացման:

Հավասարությունն ու եղբայրությունը էր բարոզում նոր կրոնը, միևնույն այդ քարոզի տակ ուրիշներին էր փաթաթում իր վարք ու բարքը, իր կարգն ու կանոնը, իր երգն ու լեզուն: Մի աստված էր ընդունում նոր կրոնը և դրանով հպարտելով իր ընդունումը, որ ի բնե հակված է բազմազանության, ինչպես է ինքը բնությունը և այդ բնությունն արտացոլող մարդկային միտքը: Բայց սա դեռ բավական չէր: Իրականում այդ մի և միակ աստվածն էլ իրեն պահում էր իբրև... գոարյուն բյուզանդացի:

գտնի:

Որտեղի՞ց եկավ ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով ծնվեց, ահավասիկ ևս մի հարց, որ այն ժամանակ չէր տրվում, բայց կրկնվեց ու կրկնվում է արդեն 1600 տարի: Ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով ծնվեց:

«Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի. Եվ հետո մարդկանց դարեր շարունակ

զարմանք պատճառում, Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են

յուր այն պատճառով, Որ անչափ շատ են սպասել նրանց:

Այսպես էլ ծնվեց «այդ մի Մաշտոց անունը»...

Հեթանոսական խավարում, ազգային անկախության վերջնական կորստի մթության մեջ, վաղվա և ապագայի անորոշության ու անհայտության մոռալ կեանքի շրջանում: «Եղիցի լոյս»:

«Եվ եղև լոյս»:

Գտնվել էր տանջալից հարցի պատասխանը, որը շատ պարզ էր, որովհետև միակն էր: Չորոքայնք ու բազմով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնությունը, ինչպես նաև պետական անկախությունը: Ավելին, Մաշտոցն իր կյանքի վերջին տասնամյակը պիտի ապրեր հայկական պետականության իսկապետ բացակայության պայմաններում: Դիզուլ ու ջանքով անկարելի է մաքառել օտար լեզուների դեմ, եթե դրանք կրում են պաշտոնական բնույթ: Իսկ ժողովուրդները գոյատևում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով, երբեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով:

Անհամեմատ ուժեղ ու գիշատիչ թշնամիներին կեր չդառնալու, նրանց դիմադրելու մի գեղ էր մնում. «Ճանաչել գիմաստություն և գլխատ, իմանալ զբան հանճարոյ», մարմնական ուժի դեմ դնել հոգեկան գործությունը, ահռելի բազուկի դեմ՝ հուժկու միտքը, համընդհանրության դեմ՝ ինքնությունը՝ «բաժանեմ գի տիրեսցես»-ի դեմ՝ «ժանիր գեղեց»-ը...

Եվ միայն այստեղ է հնարավոր դառնում պատասխանելու «ո՞վ էր Մաշտոցը» հարցին: Մաշտոցն էր այն մարդը, որ եկավ պատասխանելու մեր ժողովրդի առաջ ծառացած հարցին. «Լինե՞լ, թե չլինե՞լ»: Եվ նա ասաց. «Լինե՞լ»:

Կիսված էր արդեն մեր հայրենիքը, ճեղք-



ակադեմիաներից ու ճեմարաններից պիտի ընդուներ «հրեշտակ-դեսպան»-ներ, որոնք նրա «Տալանությունների գրքի» մեջ պիտի թողնեին իրենց մեծ անունները՝ Սկրողեր և Հյուրեման, Կոնիքեր և Մեյե, Մարկվարտ և Մառ...

Այդ նա էր, դարձյալ ու վերստին նա, որ այս ամենով մեզ ծանոթացրեց մեզ, տվեց ինքնաճանաչում, անվտանգության տեղ դնելով ինքնավստահություն, բայց ոչ անճանաչականություն, հուսահատության տեղ՝ հուսալիություն, բայց ոչ կարճատևություն, հավատաբեկություն տեղ՝ հավատ, բայց ոչ ինքնակործանություն, ինչպես նաև:

Քանակի դեմ՝ քե, Թվի դեմ՝ թույլը, Արյան դեմ՝ բանաք, Թրի դեմ՝ գրիչ, Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...

Առանց այդ ինքնաճանաչման և ինքնավստահության, առանց այդ հույսի և հավատի, առանց այն մեր գեղերի, որ կոչվում էր գրիչ, չէր կարող լինել ոչ Ավարայրը, ոչ էլ Քաղկեդոնը, ինչպես որ անհնարին է կոչվել դեռ չարքանցած, և պատասխան տալ չնտածած:

Սա թե ինչու Մաշտոցն է իսկական հեղինակն ու կազմակերպիչը մեր քաղաքական պայքարի երկու բախտորոշ հաղթանակների՝ ոչ միայն գրերի գյուտի, որի շարունակությունն էր Ավարայրը, այլ նաև Դ-վիթի ժողովի, որ պիտի Քաղկեդոնին ասեր «ոչ»: Սա թե ինչու Մեսրոպն է մեր մեծագույն և ան-

«ՄԱՍՓՐԵ ԱՐՔԱՆ»

հատված

...Ով մուտք ու ելք ունի Մամփրեի տունը, գնում-տեսնում էր. Մամփրեի խելքը տեղը, շատ լուրջ, շատ զգաստ և շատ գործնական կուրծքն ի վար մեկնված է հատակին, դիմացը՝ այրբենարանը, դիմացը՝ տետրեր, ձեռքին կարմիր մատիտ և գլխավերևում, որպես ուսուցիչ՝ թոռնուհին:

- Ասա ա:
- Այլ:
- Գմբ, այբ չէ, ա-,- և խփում է գլխին:
- Աղջի, կամաց գարկ, իմ գլուխն է կցավա: Ա-:
- Մեծատառ Ա:
- Մեծատառ Ա:
- Մեծատառ չէ, դմբ, մեծատառ, և խփում է գլխին:
- Կամաց գարկ, ձգուկ:
Մեծատառ Ա:
- Դե գրիր մեծատառ Ա:

Եվ Մամփրեն մատիտը երկար թրտում է:

- Դմբ, մատիտը մի թրտիր:
- Թող արա թրջեմ, որ գիրն լավ երևա, ձգուկ:
- Դրա համար էլ ասում եմ, սև մատիտով գրիր:
- Չէ, ձգուկ, սուրբ Մաշտոցի գրերն հարկ է որ գրվեն կարմիրով: Ասա ինչո՞ւ. բանգի սուրբ Մաշտոցը գրերն իր սրտից է հանել ի լույս:
- Լուրջյուն:
- Համբերե գիմ խոսքն ավարտիմ, ձգուկ, համբերե: Ուրեմ, սուրբ Մաշտոցի գրեր կարմիր են, բանգի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, բանգի սրբազան կոիվների են մասնակից եղել: Իմացա՞ր:
- Ուսուցիչը ե՞ս եմ, քե՞ղու: Դե գրիր մեծատառ Ա: Հո չե՞ս մոռացել:
- Չէ, ձգուկ, չէ. մոռանալու բան



ԱՆԱՉԵԼ ՕԲՄԱՍՏՈՒԹԻՆ

Վ. ՕԲՐԱՏ, ՄԱՐԱՆԱԼ ՕԲԼԱՍ ՀԱՆՃԱՐՈՅ

չէ. ջուխտակ առվակ կողք-կողքի սարից կիջվանեն-կրափվեն պստիկ առվակի մեջ, ու առվակներն ալելի կլցվեն ու ալելի կբարձրանան ու աջակողմյան առվակից պստիկ մեկ առվակ ճոթ կտա դեպի աջ ու քիչ կերթա ու էլի կդառնա իջվար: Ես քեզ մեծատառ Ա: Կատկերն իմ աչաց դեմն է, հըմբ...

- Էլ ի՞նչ հըմբ, գրիր:
- Մի գարկե, ձգուկ, համբերե, համբերե, քու դալար քե՞րն են իմ ուսերին, համբերե:
- Ոչ մի համբերե, վատ եմ նշանակում:
- Կխնդրեմ համբերե, ձգուկ, կգրեմ: Կգրեմ, ձգուկ, հըմբ մատիտն է փոքրիկ: Մատիտն է փոքրիկ, ու իմ մատներն էս պստիկ-

պստիկ մատիտ չեն բռնի: Քու հորն ասա, թող մեծ ու հաստ մատիտ բերե: Մեծ ու հաստ ու կարմիր:

- Հիմա գրո՞ւմ ես, քե՞ վատ նշանակեմ:

- Կգրեմ, ձգուկ, կգրեմ: - Եվ Մամփրեն նորից ու երկար թրտում է մատիտը և, կուրծքն ի վար մեկնված հատակին, լարված սկսում է: Ըրը... Էպես...

- Շատ մի երկարիր:
- Թող երկար եղնի, ձգուկ, մեծատառ է: Մեծատառ է ու... ու առուն ինչքան երկար, էնքան աղեկ ու էնքան գեղեցիկ ու բարին մեծ: Ասա՛յ, էպես:

- Լավ: Երեք եմ նշանակում: Կկրկնե, կարգին կսովորես մինչև գամ: Չանգը տրված է:

Եվ թոռնուհին զանգուլակը ծնկացնում է պապի գլխին, իսկ Մամփրեն տնքալով ոտքի է ելնում:

...Գարնան հետ Մամփրեն հայտնվեց գյուղում:

Մամփրեն պատերազմից, կովի դաշտից էր եկել, Մամփրեն դարիպուրյունից էր եկել, Մամփրեն սահմանն անցել-գնացել էր Էրզրի և ահա եկավ: Գյուղի հավաքատեղում այդպես դիմավորեցին:

- Է, Մամփրե, բարի տեսանք: Քու չարաբանքն՝ ապաշխարանք: Զատերն քամամ սովորեցի՞ր, Մամփրե:

Մշեցի Խաչոն, նեղսրտած, ձեռնափայտը դեմ արեց Ավելին.

- Համբերե: Քանց երեխա ինչո՞ւ կրովոսա:

Մշեցի Խաչոն, որ Մամփրեին ուսնից էր, վերականգնեց պահին վայել լուրջությունը, քրքաց-հասկացրեց, որ մեջ ընկնող-խանգարող չլի-

նի, հարմարվեց իր բարին և ձեռքը հանդարտիկ դրեց Մամփրեի ծնկին:

- Օղորմի քու անուշ ծնողաց, Մամփրե: Մարաբուկ վկա, քու արածն, Մամփրե, մեծ մարդու արած էր, մեծ բան էր: Եվ խիստ բարձրացրեց ձեռնափայտն ու շեղ-հայացք նետեց Ավելի կողմ: - Ու ամեն մարդու բան չէ: Օղորմի քու անուշ ծնողաց: Կրկնեց մշեցի Խաչոն և շարունակեց բորբոք ու ներշնչված:

- Օղորմի քու անուշ մոր, Մամփրե, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն ու ի՞նչ բնույթ ունեն: Մեկ-երկու ցնուլ պատկերե, Մամփրե:

Մամփրեն, որ գլուխսխա լսում էր Խաչոյին (փառք Աստծո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խեղճություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ ճամփից հավաքած թերթերից ընտրի գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց. գտավ մի կտոր ճիպտու և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին:

- Էս ի՞նչ է, Խաչո:
Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անդադ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց

- Գիծ է: Հիմա ես էլ գծեմ ու իմ պապի պապն էլ գա ու գծի:

- Համբերե, Խաչոն ձեռնափայտով քշեց Ավելին: - Նստիր քու տեղն ու մեր արևն մի ծախե:

- Հաշվեմք, քե՛ստու է, Խաչո: Առվակ: - Մամփրեն գիծը խորացրեց: - Առվակ է ու ոչ քե՛ դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու գուլալ: Եվ գուզահեռ գծեց: - Ու էս ջուխտակ

գուլալ առվակներն սարից կիջվա-րեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ալելի պստիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է: - Մամփրեն ճիպտով գուզահեռ առվակները միացրեց: Միացա՞ն... քե՛ միացան, քե՛ առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կցվեն ափեփափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն ճոթ տա... Էս է: Ուրեմն ճոթ կտա, քիչ մի կերթա ու... ո՞ւր պետք է երթա, Խաչո, սար է, չէ՞, ուրեմն կդառնա ու էպես-ս կիջվորե: Էս էդավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա:

- Ուրեմն, Խաչո, հայոց գրերն գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առվակների՝ շիտակ ու գուլալ ու կանաչափ առվակների հոսք է, կցվոնք է ու հատոնք: Էդպես պատկերացրու:

Ուշադիր ու լուրջ լսում էին (հաճեցի էր ու շոյող), և Մամփրեն որոշեց հասկացածը մինչև վերջ բացատրել տարեկիցներին:

Ուրեմն՝ այդպես: Բայց կան նաև տառեր, որ դաշտի, հարթավայրի առվակների պատկերն ունեն. ահա՛ ծալր առան, ոլորվեցին ու տեղն ու տեղը սուզվեցին, ահա՛ ոլորվեցին ու լճացան: Տառերից մի քանիսն էլ, ուրեմն, դաշտային առվակի պատկերն ունեն: Բայց այդ պատկերներով տառերը քիչ են: Ինչո՞ւ: Քանզի հայոց աշխարհը լեռնային է և գրերի շատը, ուժի-չուժի, լեռնային գետակների, առուների ու առվակների պատկերները պետք է ունենա: Այս էլ՝ այսպես...

ԹՐԻ ԴԵՄ ԳՐԻՉ

➤ 5 բաղդատնի բաղաբազեղ...

Միայն այսպիսի բարձունքից նայելով և այս բրձունքից նայելիս է երևում իսկական հասակն այն վիթխարի ամենավորություն, որին սովորաբար կոչում ենք մեր գրերի գյուտարար:

Մաշտոցը, անտարակույս, հանճարեղ լեզվաբան էր, անմրցակից հետախույզ հնչյունական այն բարդ համակարգի, որ ունի և ունեցել է մեր լեզուն:

Մաշտոցը նաև մեծ երաժիշտ էր: Եվ այս ասվում է՝ ոչ լոկ այն իրավունքով, որ մեզ տալիս է պատմագրությունը՝ վկայելով, քե՛ «նախ սուրբն Իսահակ (Մահակ Պարթև) և սուրբն Մեսրոպ ասացին գուրն եղանակաոր ձայնն և գերկու ձայն ստեղծե... և սուրբն Մեսրոպ՝ գկարգն Ապաշխարության»:

Առանց այս պատմական փաստի էլ Մաշտոցի երաժիշտ լինելը վեր է ամեն մի տարակուսանքից: Առանց երաժշտական շատ սուր ակնաչի, առանց նրբին լսողության անկարելի էր (և այն էլ առաջին անգամ) տարբերել ու տարբերակել մեր լեզվի թեկուզ և բաղաձայնական եռաշարքը (ծ-ց-ձ, ճ-չ-ջ և այլն), ինչպես որ այսօր էլ այդ հնչյունների տարբերությունը որսալ կարող է այն օտարազգին միայն, ով երաժշտական սուր լսողությամբ է օժտված:

Այո, Մաշտոցը մեծ լեզվաբան էր և երաժիշտ: Առանց այդ ունակությունների նա չէր կարող ստեղծել մեր Այբուբենն այնպես, որ աշխարհի խոշորագույն լեզվաբաններից մեկը՝ Ֆրանսիացի Մեյեն, ավելի քան 1500 տարի հետո գրեր. «Հայկական Այբուբենի համակարգը գլովագործող է: Հայկական հնչյունը ձայնագրվել է մի յուրահատուկ նշանով, և այդ համակարգը այնքան լավ է հիմնվել, որ հայոց ազգին հայրաթյեց հնչյունի վերջնական մի արտահայտություն, որը մինչև հիմա իրեն պահեց առանց որևէ փոփոխություն կրելու, առանց բարեփոխության կարիք զգալու, որովհետև հենց սկզբից կատարյալ էր»:

Եվ, արդարև, միայն հանճարեղ լեզվաբանը կարող էր 4-րդ դարի վերջերին հասնել այսպիսի արդյունքի: Բայց լեզվաբանը չէր, որ



Մաշտոցի մեջ որոնեց բաղաբազեղին: Ճիշտ հակառակն է, մեծ բաղաբազեղն էր, որ իր բաղաբազեղական մտքին տվեց լեզվաբանական կերպաձևություն, որովհետև դա էր միակ ելքը, այն ելքը, որը գտնելու համար հարկավոր էր լինել վիթխարի քաղաքագետ: Եվ սա ենթադրություն չէ. սրա ապացույցն է այն սկզբունքը, որով Մաշտոցը հնարել է մեր Այբուբենը:

Եթե Մաշտոցը գործին նայեր իբրև սոսկ տառատեղծ, ինչպես որ վարվել են այլ այբուբենների բազմաթիվ հնարողները, ապա նա կատարելով ամենափոքրագույն ու ամենաթվավորից, տարբերակելով և որոշելով մեր լեզվի հնչյունական համակարգը, պիտի որ եղած այս կամ այն այբուբենի տառերով նշանագրեր այդ հնչյունները՝ պակասի համար դիմելով մեկ այլ այբուբենի օգնության: Նոր այբուբեն կազմե-

լիս այսպես են վարվել բոլորը, այդ բովում նաև պալոնական այբուբենի հեղինակները, որոնք պալոնական հնչյունական համակարգի համար վերցրեցին հունական գրերը, իսկ հունարենում չեղած գրերը լրացրեցին ուրիշ այբուբեններով:

Այսպես վարվելու համար Մաշտոցն ուներ բոլոր հնարավորությունները. նա բազահմուտ էր ժամանակի գլխավոր լեզուներին ու նրանց այբուբեններին՝ հունականին, ասորականին և պարսկականին: Նա կարող էր նախընտրել այդ այբուբեններից որևէ մեկը, վերցնել դրա համապատասխան տառերը, իսկ պակասը լրացնել մեկ այլ այբուբենով: Եթե նա այբուբենի սովորական ստեղծող լիներ՝ այդպես էլ կաներ, բայց նա ընտրեց բոլորովին այլ ճանապարհ: Քաղաքագետ Մաշտոցը վերջնականապես համոզվել էր, որ վիթխարի և գիշատիչ աշխարհակալության կողքին, առավել ևս երկու աշխարհակալությունների միջև ապրող փոքրաքանակ ազգությունը կարող է գոյատևել՝ չեչտելով իր տարբերությունը և ոչ քե՛ գլխագրելով նմանությունները:

Լինելով զարմանալի խորաբախանց գիտնական՝ նա ասորա-պարսկական աշից-ձախ գրությանը գերադասեց հունական ձախից-աջ գրությունը, որը գրության ավելի բարձր վիճակ էր ներկայացնում և դարձնում հետո պիտի աշից ձախ գրողներին իսկ ստիպեր վերաշրջել իրենց գրության եղանակը: Ճիշտ այդպես էլ նա, հունարենի օրինակով, նշանագրեր ստեղծեց նաև ձայնավորների համար, ինչը բացակայում էր պարսկական և սեմական այբուբեններից և մի այնպիսի թերություն էր, որ դարձնում հետո պիտի ստիպեր լրացնելու այդ թերությունը: Նույն ձևով նա կցողական գրությունից նախընտրեց անջատականը, մի խոսքով՝ այն ժամանակվա բոլոր այբուբեններից առավել նրանց լավագույնը, բայց խուսափեց այն թերություններից, որոնք այդ այբուբենների մեջ հարատևեցին, ինչպես, օրինակ՝ հնչյունագրական այն թերությունից, երբ միևնույն տառը տարբեր պայմաններում տարբեր հնչյուն է նշանակում և ընդհակառակը՝ միևնույն հնչյունը

տարբեր տեղերում նշանագրվում է այլ տառերով: Այս ամենով Մաշտոցն իր այբուբենը հասցրեց մի այնպիսի վիճակի, որը վաղուց արդեն գիտության կողմից համարվում է իր ժամանակի ամենակատարյալը և անբերին:

Բայց այս չէ գլխավորը: Մաշտոցի բուն նպատակը ոչ քե՛ հերթական մի այբուբենի ստեղծումն էր իր ժողովրդի համար, այլ մի բոլորովին ուրույն, բոլորովին նոր, գուտ հայկական Այբուբենի ստեղծումը: Նույնիսկ այն դեպքերում, երբ նա վերցրել է որևէ գիր, ապա դա վերափոխել է այնպես, իր նախատիպից հեռացրել այնքան, որ մինչև հիմա էլ այդ նախատիպը որոշելիս գիտությունը չի կարողանում խուսափել վեճից: Հունարենի հնչյունական համակարգում չեղած հնչյունների համար Մաշտոցը չի վերցրել ուրիշ այբուբենների համապատասխան գիրը, այլ ինքն է հորինել և այն էլ՝ իր իսկ հնարած տառերից:

Հեռանալ նմանություններից, ընդգծել տարբերությունները՝ արանք հասցնելով մի բոլորովին նոր որակի, ահա այն սկզբունքը, որով առաջնորդվել է Մաշտոցը և հասել այդ սկզբունքի կատարյալ իրագործման: Այս կերպ նա ստեղծեց մի Այբուբեն, մի գուտ հայկական Այբուբեն, որ տարբեր է քե՛ իր ժամանակի, քե՛ հետագայի բոլոր մյուս այբուբեններից:

Ավելին, հավատարիմ իր այս սկզբունքին, Մաշտոցի միտքը մտել է այնպիսի մի ոլորտ, որ դժվար է մինչև իսկ երևակայել: Եվ իսկապես էլ ո՞վ է այն երկրորդ տառաստեղծը, որ մտադրվել է նույնիսկ կետադրական նշաններով էլ տարբերվել եղած ու լինելիք բոլոր այբուբեններից: Առայժմ չկա այդ երկրորդը, և Մաշտոցն է առաջինը, որը խիզախեց գլխավար շուտ տալու, օրինակ, միջակետի և վերջակետի կետադրական նշանակությունը: Իր ստեղծած գուտ հայկական բուրբ այդպես էլ մնաց անկրկնելի: Իր ստեղծած բացականչական ու հարցականը՝ նորից լինելով գուտ հայկական, կրկին մնալով եզակի՝ միաժամանակ ձեռք բերեցին ամենահարմար իրավացի համարումը:

Այսպես կարող էր գործել ոչ սոսկ տառաստեղծը, ոչ էլ մեծ լեզվաբանն անգամ. այսպես կարող էր գործել միայն մեծ բաղաբազեղը:

Ս. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ կարդացած գեղարվեստ:

Հայ ժողովրդի պատմական կենսագրության և ծակատազրի համար դարակազմիկ նշանակություն ունեցան երկու իրադարձություն՝ քրիստոնեության մուտքը Հայաստան կամ, ինչպես ընդունված է ասել՝ հայոց դարձը Գրիգոր Լուսավորչի ձեռքով IV դարի սկզբին և հայ գրերի գյուտը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով՝ V դարի սկզբին, որոնք մեծապես կանխորոշեցին մեր ժողովրդի պատմական զարգացման հետագա ընթացքը, նրա հոգևոր ազգային նկարագիրը: Դեռ ուրարտական ժամանակներից մեր ժողովրդի համար գիրը եղել է, առանց չափազանցման, պետական անկախության և ազգային ինքնության խորհրդանշի: Մ.թ.ա. IX դարի վերջում, Իշախիմի թագավորի օրոք (823-810) ուրարտացիք արդեն մշակել էին սեփական սեպագրերի ավելի պարզեցված, գեղազանցապես մեկ որոշակի վանկ արտահայտող համակարգ, որը զերծ էր ասուրական բազմիմաստ սեպանշաններից: Ուրարտական սեպագրերը գործունեությունից դուրս եկան մ.թ.ա. VI դարում՝


ԱՐԵՐԱՍ ՄՈՒՇԵՂՅԱՆ. Բանասիրական գիտությունների դոկտոր

Մասեոցյան գրերի գյուտը և հայ նոր դրությունը սկզբնավորումը

Ուրարտու պետության (Վանի թագավորության) անկումից հետո: Ըստ այսմ, ուրարտական սեպագրության 300-ամյա շրջանը խորհրդանշորեն կապվում է Ուրարտու պետության հզորության և անկման դարաշրջանի հետ: Արտաշեսյան հարստության շրջանում (մ.թ.ա. 190 թվից սկսած) Հայաստանն այնպիսի բարգավաճման հասավ, որ օտարազգի ուսումնասիրողների պնդմամբ, տնտեսության ու մշակույթի մեծ ծաղկումն անհնար է պատկերացնել առանց սեփական գրի ու գրականության:

Մ.թ. 384-385 թթ. Հայաստանը բաժանվեց հարևան երկու հզոր պետությունների միջև: Հայաստանի մեծ մասը (Կողմն Արարատու) անցավ պարսից արքայից արքայի գերիշխանության տակ, իսկ Բարձր Հայքը և Ծովից աշխարհը, որոնք միասին Մեծ Հայքի 1/5 մասն էին կազմում, կցվեցին Արևելա-Հռոմեական կայսրությանը: Հայոց պետականությանը սպառնացող ահավոր վտանգի հետ միասին հայ ժողովրդի գլխին կախվել էր հոգևոր և մշակութային երկակի էքսպանսիայի և ուժացման ոչ պակաս սուղական վտանգ: Երկրի և ժողովրդի համար այդ ճակատագրական պահին օգնության եկավ հազարամյա պատմական ինչոքությունը-ինքնուրույն գրի գաղափարը՝ որպես հզոր պետականության խորհրդանշ: Մովսես Խորենացին շատ ռիպուկ է բնորոշել այդ բախտորոշ պահը, երբ Մեսրոպ Մաշտոցն սկսեց իր գործունեությունը. «Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, և գիտութիւնն միւթ իւրոյ համբերութեան գտեալ Մեսրոպայ»- «Տեսնելով, որ հայոց թագավորության վերջը հասել է, Մեսրոպը (երկրի) խռովություններն իր համբերության նյութ դարձրեց»:


Պատահական չէ, որ հայ ժողովրդի պատմական կենսագրության երկու ամենանշանավոր հոգեվորիչ անցքերը՝ հայոց դարձը IV դարի սկզբին և հայ նոր դրության ստեղծումը V դարի սկզբին, տեղի ունեցան հենց այն պատմական պահերին, երբ հայոց թագավորը և քահանա-



ցության է տրվել մեհենական պաշտամունքի գրքերի և հեթանոսական մատյանների հետ միասին՝ քրիստոնեության ընդունման ժամանակ, որը տարածվում էր ոչ միայն քարոզչությամբ, այլ նաև զինված դիմադրության պայմաններում, ինչպես վկայում են Ջենոբ Ատրին, Ագաթանգեղոսը և հենց Մովսես Խորենացին: Հայոց քրմապետի և նրա քրմական գործի օրհասական առաջին պատերազմը ցույց է տալիս, որ քրմերը կատաղի դիմադրել են նոր հավատին և կամովին չեն բացել իրենց մեհյանների դռները քրիստոնեական խաչի առջև: Իբրև նախաձեռնողական հայերեն գրի ոչնչացման լավագույն փաստարկ կարող է ծառայել Ագաթանգեղոսի այն վկայությունը, որ քրիստոնեության առաջին հարվածն ուղղված է եղել Վաղարշապատից Արտաշատ տաճող ծանապարհին գտնված գրի և գրչության Տիր աստծո տաճարի դեմ՝ «Ճարտար»՝ դպրի մեհյանը, որտեղ բազմացվում էին հեթանոսական քրմական գրքեր, և կար նաև գրադարան (դիվան):

Սակայն այս պերճախոս փաստը վկայակոչող նախաձեռնողական գրի կողմնակիցները հաշվի չեն առնում մի շատ կարևոր հանգամանք: Մասամյան առաջին արքայից արքա Արտաշիտը (224-241) և նրա որդի Շապուհ I-ը (241-272) ի հակակշիռ տաալված Պարթև Արշակունիների հելլենաիզմին, Իրանի հսկայածավալ տերության տարածքում վերականգնեցին Աքեմենյան շրջանի Չրադաշտ մոզի կրոնը՝ կրակապաշտությունը: Հատկապես 244/5 թվերին հռոմի դեմ տարած փառահեղ հաղթանակից հետո գրադաշտականությունը հաղթարշավով անցավ Իրանով մեկ և տարածվեց նաև արքայից արքային հպատակ երկրներում: Խոսքով Մեծի (Տոդատ II-ի) դավադիր սպանությունից հետո Հայաստանում Արտաշիտ Մասամյանի տիրապետության տարիներին և նրան հաջորդած ժամանակաշրջանում, որ Մովսես Խորենացին անվանում է «ամբիշխանության 27 տարի», Հայաստանում մեհենական պաշտամունքը հետզհետե տեղի տվեց կրակապաշտության առաջ: Պատմաիր վկայությամբ, Արտաշիտը Իրանայում է «գիտուն որմզդական որ ի վերայ թագմին որ ի Բագասան, անշէլ լուցանէ», այլև փշտում է հայոց հեթանոսական պաշտամունքի արժանները, որ շինել էր Վաղարշակ Պարթև թագավորը՝ արեգակի և լուսնի պատկերների հետ միասին:

Կրակապաշտությունը Հայաստանում է՛լ ավելի տարածվեց Շապուհ I-ի որդի Որմիզդ-Արտաշիտի օրոք, որը Տոդատ Գ-ից առաջ թագավորում էր Հայաստանում (264-272): Դավիթ Յոսվենացին, նկարագրելով հեթանոսական կույսերի գալուստը Հայաստան մոտ 300 թվին, պատմում է, թե կրակապաշտության ինչ տսկալի արարողության հանդիպեցին նրանք Արևելյան Տիգրիսի ակունքների մոտ՝ Վանա ծովից արևելք ընկած տարածքում: Ահա թե ինչու Գրիգոր



Լուսավորիչն իր յոթնօրյա վարդապետության մեջ ի թիվս այլ մեղքերի և անօրինությունների դատապարտում է մեր նախնիների մոխրապաշտությունը:

Այնպես որ հայոց մեհենական պաշտամունքը և դրա հետ նաև քրիստոնեական հայոց գիրը զգալի կորուստներ կրեցին Մասամյանների տիրապետության առաջին տասնամյաններին, և քրիստոնեության մուտքը Հայաստան առաջին հերթին ուղղված էր դրսից պարտադրված գրադաշտականության դեմ:

Հայ նոր գրի և դպրության ստեղծման հարցին անդրադարձել են Մաշտոցի կենսագիր Կորյունը և V դարի պատմիչներ Մովսես Խորենացին ու Ղազար Փարպեցին, թե Կորյունի երկն ընդունված է համարել Մեսրոպ Մաշտոցին նվիրված աճեցից հարազատ և ստուգապատում Հայաստանը: Բայց Մաշտոցի Վարդը չափազանց թերի կլիներ առանց Խորենացու «Հայոց Պատմության», որը թեև ժամանակագրական կարգով երկրորդ աղբյուրն է, սակայն Մեսրոպ Մաշտոցի գործունեության շատ կողմերի բացահայտման առումով առաջին սկզբնաղբյուրի նշանակություն է ձեռք բերում:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է մոտ 361 կամ 362 թվականին Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Մաշտոցի ծննդավայրը՝ Տարոն գավառի Հացյաց կամ Հացեկաց գյուղը ինչպես և Փավստոս Բուզանդը, մշելով, թե այդ գյուղը կարճագատների սեփականությունն էր:

Մամուկ հասակում Մաշտոցը կրթվել էր հելլենական (հունական) դպրությամբ, ապա Մեծ Հայքի Արշակունի թագավորների արքունի դիվանատանը դարձել դպիր:

Քանի որ Ներսես Մեծը հուսիկ քահանայապետի որդու՝ Աթանագի՛նեսի որդին էր, որը, ըստ Փավստոսի, իր եղբայր Պապի հետ կայծակնափար եղավ Աշտիշատի եկեղեցու սեփականատեր, ապա Մեսրոպը Ներսես Մեծ կաթողիկոսի հորեղբոր որդին է գալիս, որից տարիքով շատ կրտսեր լինելով՝ աշակերտել է նրան, իր հորեղբոր որդուն. «սենեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ ելից նորա յաշխարհէ՝ ի դրանն արքունի կարգեալ քարտուղար»:

Ուրեմն Մեսրոպը դեռատի հասակում հելլենական կրթություն էր ստացել Ներսես Մեծի ձեռքի տակ,՝ առ առավելն մինչև 369 թիվը, այսինքն, մինչև Ներսես Մեծի վախճանը, երբ ընդամենը 7-8 տարեկան է եղել՝ ծնունդը հաշվելով 361/2 թվականից, որ, սակայն, անբնական է: Այնուհետև դալի է դարձել Արշակունյաց արքունի դռանը՝ ոմն Առավան հազարապետի օրոք, որը հռոմեացի պատմագիր Ամմիանոս Մարկե-լիմոսի ինչատական հայագի սպարապետ (Magister armorum) Առաբանես է (Arrabannes) Կիլիկես (Gylaces) արեֆելտի գործակիցը: Սրանց պետք է նույնացնել Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ հանդես եկող Վահան Մամիկոնյանի (Մամվել Մամիկոնյանի հոր) և Գղակ մարդպետի հետ, որոնք գիշերով գաղտնի մուտքով մտան Արտագերս ամրոցը և անարգեցին Փառանձեմ թագուհուն՝ Պապի մորը: Եվ քանի որ Առաբանեսը և նրա գործակից Գղակ մարդպետը սպանվեցին Պապ թագավորի ձեռքով ոչ ուշ, քան Պապի գահակալության վերջին տարում (374 թ.), ապա Մեսրոպը պետք է արքունի ծառայության մտնել, որպես գրագիր, նախքան Պապի եղբորական սպանությունը:

Այսպիսով, Մեսրոպի գործունեության սկիզբը որոշելու համար ունենք երկու ժամանակագրական նշակետ՝ նա արքունի դպիր է դարձել Ներսես Մեծի վախճանից հետո և Առավանի հազարապետության օրոք՝ 369 և 374 թվերի միջև, երբ նա պետք է ծնված լինել ոչ թե 361 կամ 362 Ուրեմն Մեսրոպը պետք է ծնված լինել ոչ թե 361 կամ 362 թվին, ինչպես ընդունված է հայագիտության մեջ, այլ դրանից զոմե 4-5 տարի առաջ, մոտ 357/8 թթ.:

(շարունակելի)



Փղերին մի կատաղեցրեք...

Լազերային ճառագայթմամբ տեսողության վերականգնում

Լազերային ճառագայթմամբ տեսողության վերականգնումն իրենից ներկայացնում է մի ընթացակարգ (պրոցեդուրա), որի ժամանակ օգտագործվում է ուլտրամանուշակագույն լույսը՝ վերականգնելու աչքի արտաքին մակերեսը: Սա կարող է նվազեցնել կամ նույնիսկ բացառել կախվածությունը ակնոցից կամ էլ կոնտակտային լինճաներից: Համարյա բոլոր հիվանդները, որոնք կարճատես են կամ էլ տառապում են աստիգմատիզմով, այս նոր տեխնոլոգիայի համար պոտենցիալ թեկնածուներ են հանդիսանում:

Նկարում պատկերված է, թե ինչպես է լազերային ազդակը (պուլսը) վերականգնում եղջերաթաղանթը՝ ճշգրիտ քանակությամբ եղջերաթաղանթի հյուսվածքները հեռացնելով:

Ինչպե՞ս է լազերային ճառագայթը վերականգնում տեսողությունը

Գոյություն ունի լազերային ճառագայթմամբ աչքի տեսողության վերականգնման պրոցեդուրայի (ընթացակարգ) երկու տարբերակ: Առաջին տարբերակը հայտնի է որպես կտրվածք եղջերաթաղանթի վրա: Երկրորդ տարբերակը (ֆոտոռեֆրակտիվ կեռատեխնոմիա) եղջերաթաղանթի մի հատվածի հեռացում:

Ակնաբույժն ինքն է որոշում համապատասխան տարբերակը: Այս երկու պրոցեդուրաներն էլ իրականացվում են ակնաբուժական լազերային կենտրոնի կողմից օգտագործելով լազերը, որը ներկայումս ամենատարածվածն է լազերային ճառագայթմամբ ակնաբուժության մեջ: Լազերի օգնությամբ հեռացվում են աչքի եղջերաթաղանթի բարակ հյուսվածքները, հեռացվող հյուսվածքը հաճախ մարդու մազից էլ բարակ է լինում:

Ինչպե՞ս է տեղի ունենում պրոցեդուրան

Ողջ այդ ընթացքում հիվանդն արթուն է: Փաստացի լազերային ճառագայթման ընթացքը տևում է մի քանի րոպե: Պրոցեդուրայի ավարտին աչքի վրա դրվում է պաշտպանիչ վահանակ: Տեսողությունն արագորեն վերականգնվում է հաջորդ օրը, թեև լավագույն արդյունքը նկատելի է լինում 1-12 շաբաթ հետո: Այս ամբողջ ընթացակարգը (պրոցեդուրան) կատարվում է ուրբաթ օրը: Փաստորեն հիվանդը կարող է վերադառնալ աշխատանքի՝ երկուշաբթի օրը՝ առավոտյան:

Արդյոք ես համապատասխան թեկնածու՞ն եմ լազերային բուժման համար

Հիվանդներին ընտրում են միայն հիմնավոր գնումն կատարելուց հետո: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ ձեր ակնաբույժի կողմից կամ էլ դիմել մեր խորհրդատվական անձնակազմին:

Լազերային ճառագայթմամբ տեսողության վերականգնման կենտրոնի բժշկներն ունեն ավելի քան 25 տարվա փորձ՝ եղջերաթաղանթային ռեֆրակտիվ և լազերային վիրաբուժության բնագավառներում: Վերջին տասն տարիների ընթացքում կենտրոնի վիրաբույժները կատարել են բազմաթիվ բարդ վիրահատություններ: Ներկայումս նրանք համաշխարհային մակարդակով դասվում են այն առաջատարների շարքը, որոնք կատարում են վիրահատություններ՝ օգտագործելով լազերային ամենաթանաքական կից տեխնիկան:

Առողջ աչք

Լույսն անցնում է եղջերաթաղանթի և ոսպնյակի միջով՝ կենտրոնանալով ցանցթաղանթի վրա, ապահովելով պարզ տեսողություն:

Կարճատես աչք

Աչքը երկարացած է կամ էլ եղջերաթաղանթից ուղղաձիգ լույսի ճառագայթները կենտրոնանում են ցանցթաղանթի առջև, առաջ բերելով աղոտ տեսողություն:


Աստիգմատիկ աչք

Եղջերաթաղանթը ձևափոխված է: Լույսն ընկնում է մի քանի կետերի վրա: Արդյունքում՝ պատկերն աղավաղվում է:

Նյութերը պարբերաբար
Հասնիկ Արախանյանը
(Արտասահմանյան մամուլից)

(Շարունակելի)

How Blepharitis
Affects The Eye



Dandruff-like particles accumulate on the lid surface.

Գրիպի հարուցիչը ենթարկվել է այլակերպման...

1918-19 թվականներին Եվրոպայում առանձնացվեց գրիպի հարուցիչը: Չնայած այդ ժամանակներից մոտ մեկ դար է անցել ու գիտությունը մեծ առաջընթաց է ապրել, սակայն գրիպի հարուցիչն էլ «քնած չէ»:

Անցած դարում այդ հարուցիչը այլափոխվել է, ենթարկվել մուտացիայի և գիտությունը նորանոր քայլեր պետք է ձեռնարկի մարդկությանը այդ վտանգից պաշտպանելու համար:



Նոյյան ցաղանի որոնումները բարունակվում են

Ու թեև առայժմ հաջողությունները ավելի քան համեստ են, սակայն այդ գործի նվիրյալները չեն հուսահատվում:

Վերջերս կազմավորվեց ռուսական հերթական մի արշավախումբ, որը պատկանելի էր ոչ միայն մարդկանց և մասնագետների թվով, այլև տեխնիկական հագեցվածությամբ: Արշավախումբը վճռական էր տրամադրված գտնել Նոյյան Տապանը և լուծել բիբլիական առեղվածքը: Սակայն արշավախմբին հիասթափություն էր սպասում: Նրան հնարավորություն չտրվեց անգամ մեկնել Թուրքիա, որի տարածքում պատմական անարդարության արդյունքում հայտնվել է բիբլիական լեռը: Ռուսները մոտափոխվեցին չտաքացան: Թուրքերը դա բացատրում են անվտանգության հետ կապված բարդություններով: Թե ո՞րն է այդ մերժման իրական պատճառը՝ հայտնի է միայն թուրքերին: Ասենք միայն, որ ռուսներից առաջ նման պատճառաբանությամբ մերժում էր ստացել նաև ամերիկյան արշավախումբը: Ոչ իրենք են որոնում, ոչ բողոնում են ուրիշներին:

Այսինքն զարմանալ պետք չէ, պատմական ճշմարտության բացահայտումը բիբլիական թե նոր ժամանակների, անընդունելի է թուրքերի համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կերպարվեստի բաժնի վարիչ - արվեստագիտության դոկտոր (ժ.00.03)

Թատրոնի բաժնի վարիչ - արվեստագիտության դոկտոր (ժ.00.01)

Զարտարապետության բաժնի վարիչ - ճարտարապետության դոկտոր

Երաժշտության բաժնի վարիչ - արվեստագիտության թեկնածու (ժ.00.02)

Ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ - արվեստագիտ. թեկն. (ժ.00.02)

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացնել հայտարարության հրապարակումից հետո՝ 1 ամսվա ընթացքում: Փաստաթղթերը ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան 19, Մարշալ Բաղրամյան պողոտա 24գ, V հարկ:

Հեռախոս՝ 58-18-51:

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ալպագո Նովելոն՝ ոչ ևս է

Առհավետ հրաժեշտ առավ մեզմե՝ Հայ միջնադարեան ճարտարապետության մեծագույն ուսումնասերներէն պրոֆ. Աղրիանո Ալպագո-Նովելոն: Կալանաուած երկարատև հիվանդության ծիրաների մեջ, վերջին օրերին իր առողջական վիճակը արագընթաց վատթարացավ:

Ծնվել է 1932-ին, հյուսիսային Իտալիայի Դոլոմիթեան չնաշխարհիկ բարձունքներով շրջապատված Բելլունոյ քաղաքի մեջ, Ալպագո-Նովելոյի առաջին համդիպումները հայ արվեստին և ճարտարապետության հետ տեղի կունենան հեռավոր վաթսուական թվականների կեսերին, մինչ առաջին գիտարշավը դեպի Հայաստան գուգադիպում է 1967-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Ալպագո-Նովելոյի մահով հայ արվեստի և հատկապես հայ ճարտարապետության հետազոտությունները կկորսեն մեծ վերջին քառասուն տարիների իրենց ամենեւ գործուն մշակներից մեկը: Հանգուցյալը միաժամանակ ճանաչված մասնագետ էր բյուզանդական և վրացական ճարտարապետություններում: Գիտեր միացնել հետազոտական ուժգնակի աշխատանքի՝ նույնքան տեղոտ ուսուցողական և ժողովրդականացման բարձրորակ գործունեությունը:

Ինքը եղած է հղացողը և գլխավոր մղիչ ուժը Հայ միջնադարյան ճարտարապետության ցուցահանդեսին, որ շրջած է Իտալիայի անհամար քաղաքներ և ավելի քան տասնութ երկրներ՝ Հարավային Ամերիկայից մինչև Պարսկաստան. հուսկ կայք հաստատած է Երևանի ճարտարապետության թանգարանի մեջ:

Աղրիանոյ Ալպագո-Նովելոն միշտ նախանձախնդիր եղած է, իր բազմապիսի ծրագրներուն համար, ապահովելու գործակցող ուժերու, ըստ կարելույն, առավելագույն թիվը, նամավանդ նրանց համար երիտասարդ տաղանդներ, որոնց հանդեպ միշտ մեծ համակրանք և վստահություն կտածեր: 1976-ին հիմնած էր, միլանահայ մի խումբ ազգայիններու քաղաքներ և օժանդակությամբ Հայ Մշակույթի վավերագրումի և ուսումնասիրության կենտրոնը: Այդ կենտրոնի միջոցով գործակցության ամենասերտ կապեր հաստատեց ՀՀ Գիտությունների ակադեմիայի, ինչպես նաև Իտալիայի և այլ երկրների հայագիտության մարզերի մեջ հավաստի և խոստումնալից ուժերի հետ:

Իր գործունեության երկար տարիների ընթացքում ընդլուծված ճարտարապետությունների և արվեստի արտահայտությունների նկատմամբ զարգացավ ներգգած համակրանք և մի հասկացողություն, որով կարողացավ թափանցել անոնց ներքին յուրահատուկ ուժականությունների և առանձնահատկությունների մեջ, առանց զիջելու՝ զանոնք նվազագույն եզրերի կամ հայտարարների վերածելու սահմանափակիչ փորձություններու, շարժելով հանդերձ միշտ խստագույն բնադատության պահանջների ծիրի մեջ:

Մասնավոր, գորովալից սեր տածեց Հայաստանի, նրա մշակույթի և ժողովրդի հանդեպ, այնպես որ բարեկամական շրջանակների մեջ ծանոթ էր փաղաքշաբար որպես Ալպագեան: Այս անունը նաև վերնագիրը եղավ հոգվածների այն համացանցային ժողովածուի, որը խմբագրեց Ալպագո-Նովելոյի ծննդյան 70-ամյակի առթիվ, պրոֆ. Ջանկլաուտիոյ Մաքիարելլա, գործակցութեամբ Պողոս Լևոն Ձեքիեանի, Գայիանե Կազմատիի և Լուիջի Մագարիտտոյի, և որ ներկայացվեցավ հոբելյանի անցեալ 27 ապրիլին ի ներկայութեան Կա Ֆոսկարիի ռեկտոր պրոֆ. Պիեր Ֆրանչեսկո Գետտիի, բազում գործընկերներու, սաներու-և բարեկամներու:

Աղրիանոյ Ալպագո-Նովելոյ պատուոյ դոկտոր էր ՀՀ Ազգային Ակադեմիայի:

ԴԻՎԱՆ ՊՈՍՏՍԵՍ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒՐԹՅՈՒՆ

Գիտություն

Գլխավոր խմբագիր

Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,

հեռախոս՝ 56-80-14:

Դասիչ՝ 69268, գրանցման

վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝

9.09.2005թ.

"ԴԻՄԻՏԻՍ" ("Hayka")

razeta HAH PA